ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ

" CHILDREN'S HOME – AFTER MARIE IZMIRLIAN " STATE NON COMMERCIAL ORGANIZATION OF THE MINISTRY OF LABOUR AND SOCIAL ISSUES OF REPUBLIC OF ARMENIA

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N2

«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ին տնօրեն

«Մ.Ա.Կիրակոսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու մասին

14. 01.2025թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Մ.Ա. Կիրակոսյան» ՍՊԸ-ի միջև 02.02.2024թ-ին կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-ԵԽ-13-ՄԻ» ծածկագրով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական, սանիհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիրով և գնման - վճարման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ: Սակայն «Մ.Ա.Կիրակոսյան» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի իրականացվել ապրանքի մատակարարում՝ խախտվելով պայմանագրով սահմանված վաճառողի պարտավորությունները, որի արդյունքում 20.12.2024թ-ին գնորդը միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը՝ այն համարելով լուծված 113630.2 (մեկ հարյուր տասներեք հազար վեց հարյուր երեսուն դրամ, քսան լումա) ՀՀ դրամի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները 20.12.2024թ «Մ.Ա.Կիրակոսյան» ՍՊԸ-ին ուղարկվել է համապատասխան ծանուցում և տրվել է 5 օրացուցային օր՝ տուժանքով սահմանված պայմանագրի պայմանագրի ապահովման 17813.9 /տասնյոթ հազար ութ հարյուր տասներեք դրամ, ինսուն լումա/ ՀՀ դրամ և որակավորման ապահովման 26720.85/ քսանվեց հազար յոթ հարյուր քսան դրամ, ութսունհինգ լումա/ ՀՀ դրամ գումարները Շահառուի 900008000664 հաշվեհամարին փոխանցելու համար, սակայն սահմանված ժամկետում «Մ.Ա.Կիրակոսյան» ՍՊԸ-ի կողմից չի վճարվել պայմանագրի և որակավորման ապահովման ապահովումների գումարը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի « ա » պարբերությամբ.

ՈՐՈՇԵՑԻ

1. «Մ.Ա.Կիրակոսյան» ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար»

ՏՆՕՐԵՆ՝ Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան ✉ 375037 Մ. Յաղուբյան, 13 ☎ (010) 20-15-86, 20-65-92, maryizmirlyan.childcarecenter@mlsa.am